ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2025 թվականի N 854-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի բյուջեի միջոցների 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. Դիլիջան համայնքի տարածքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների նկատմամբ արտոնություն սահմանելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքում նորածին երեխաների ընտանիքներին աջակցություն տրամադրելու մասին:
Զեկ. ԴավիթՍարգսյան

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՒԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2025 թվականի N 855-Ն

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Դիլիջան համայնքի բյուջեի վարչական մասի 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 77,738,907.50 (յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար ինը հարյուր յոթ դրամ, հիսուն լումա) և ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդի՝ 602,689,029.0 (վեց հարյուր երկու միլիոն վեց հարյուր ութսունինը հազար քսանինը դրամ) գումարները, ընդամենը 680,427,936.50 (վեց հարյուր ութսուն միլիոն չորս հարյուր քսանյոթ հազար ինը հարյուր երեսունվեց դրամ, հիսուն լումա) ուղղել ֆոնդային բյուջե՝ հետևյալ դասակարգումներով՝

1) «04-05-01» Դիլիջան համայնք /Ճանապարհային տրանսպորտ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածին՝ 646,880,936.5 ՀՀ դրամ, 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին՝ 6,249,000 ՀՀ դրամ,

2) «08-01-01» Դիլիջան համայնք /Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին՝ 7,450,000 ՀՀ դրամ,

3) «08-02-02» Դիլիջան համայնք /Թանգարաններ և ցուցասրահներ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ հոդվածին՝ 2,408,000 ՀՀ դրամ,

4) «06-03-01» Դիլիջան համայնք /Ջրամատակարարում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածին՝ 15,840,000 ՀՀ դրամ,

5) «01-01-01» Դիլիջան համայնք /Դիլիջանի քաղաքապետարան/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ հոդվածին՝ 1,600,000 ՀՀ դրամ,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՒԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2025 թվականի N 856-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածով և հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ղեկավարի
առաջարկությունը՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված և պատերազմի ընթացքում հաշմանդամություն ստացած անձանց ընտանիքի անդամներին (ծնող, ամուսին, կին, երեխա) 2025 թվականի համար սահմանել արտոնություն՝ տեղական տուրքերի և վճարների նկատմամբ կիրառել զրոյական դրույքաչափ և ազատել տեղական տուրքերի և վճարների վճարումից:

2. «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաների ուսման վարձավճարների նկատմամբ 2025 թվականի համար սահմանել արտոնություն՝

1) Միաժամանակ երկու բաժին հաճախող երեխաների համար երկրորդ մասնագիտության համար՝ ուսման վարձավճարի 30% -ի չափով,

2) Միևնույն ընտանիքից 2 և ավելի երեխաներ հաճախելու դեպքում յուրաքանչյուր երկրորդ և հաջորդ երեխաների համար՝ ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

3) Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

4) Երկկողմանի ծնողազուրկ երեխաներին ազատել ուսման վարձավճարից,

5) Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին ազատել ուսման վարձավճարից:

3. Դիլիջանի համայնքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների սաների ուսման վարձավճարների նկատմամբ 2025 թվականի համար սահմանել արտոնություն՝

1) Միևնույն ընտանիքից 2 և ավելի երեխաներ հաճախելու դեպքում յուրաքանչյուր երկրորդ և հաջորդ երեխաների համար՝ ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

2) Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ ուսման վարձավճարի 50 %-ի չափով,

3) Երկկողմանի ծնողազուրկ երեխաներին ազատել ուսման վարձավճարից,

4) Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին ազատել ուսման վարձավճարից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և տարածվում 2025 թվականի հունվարի 1-ից առաջացած հարաբերությունների վրա:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՒԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@dilijan.am,
dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2025 թվականի N 857-Ա

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի վարչական մասից Դիլիջան համայնքում 2024թ. ծնված երեխաների ընտանիքներին, որոնք ֆինանսական աջակցություն չեն ստացել և 2025թ. ընթացքում ծնված երեխաների ընտանիքներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 42-րդ կետերի պահանջներով և համաձայն Դիլիջան համայնքի ավագանու 12.01.2024թ. թիվ 576-Ն որոշման՝Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Դիլիջան համայնքում 2024թ. ծնված երեխաների ընտանիքներին, որոնք ֆինանսական աջակցություն չեն ստացել և 2025թ. ընթացքում ծնված երեխաների ընտանիքներին /ծնողներից առնվազն մեկը պետք է լինի Դիլիջան համայնքի բնակիչ/ ֆինանսական աջակցություն ցուցաբերելու համար Դիլիջան համայնքի 2025թ. բյուջեի վարչական մասի «Ընտանիքի անդամներ և զավակներ» /բաժին 10 , խումբ 04, դաս 01, հոդված 4729/ նախատեսված 7000000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամը 2025թ-ի ընթացքում տրամադրել նորածին երեխաների ընտանիքի մայրերին, յուրաքանչյուր նորածին երեխայի համար՝ 20000 դրամ, ընտանիքի մյուս երեխաների՝ յուրաքանչյուրի համար՝ 10000-ական դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲՈՋԻԿՅԱՆ ԱՐՏԱԿ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՒԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**